

ԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ և ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՆՈՐԱՅՐ ՈՒՐԲԵՆԻ ՔՈՉԱՐՅԱՆ

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՉՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Ը.00.02. <Տնտեսագիտության, դրա ճյուղերի տնըեսագիտություն և կառավարում> մասնագիտությամբ
տնտեսագիտության թեկնածուի

գիտական աստիճանի համար

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2013

Ատենախոսության թեման հաստատվել է Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա

Գիտական ղեկավար տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,
Հայկ Երվանդի Խաչատրյան

Պաշտոնական ընդդիմախոսներ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,
Սամվել Սերգեի Ավետիսյան

տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր
Լեվիկ Հրանտի Աղաջանյան

Առաջատար կազմակերպություն Հայաստանի պետական Տնտեսագիտական Համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013թ. հունիսի 28-ին ժ. 13:30-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՂ-ի տնտեսագիտության թիվ 015 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0009, ք. Երևան, Խ.Աբովյան 52:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2013թ. մայիսի 27-ին:

015 Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար

տեխ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր՝

Ա.Յ.Առաքելյան

Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Ներկայումս ոչ միայն հայկական, այլ նաև համաշխարհային տնտեսությունը գտնվում է լուրջ տրանսֆորմացիաների փուլում, որոնք կապված են իննովացիաների և նոր տնտեսական մարտահրավերների հետ: Այս փոփոխությունների շարքում իր տրամաբանությամբ ամբողջովին համապատասխանում է այն տեղի ունեցող երևույթը, որ ինտենսիվորեն զարգանում է փոքր բիզնեսը. ընդլայնվում են նրա գործունեության ոլորտները և նրա գործունեության ցանկը: Մեծանում է տեսակարարար կշիռը և փոքր ֆիրմաների դերը վերամշակման և բարձր տեխնոլոգիական արտադրության արտադրանքի թողարկումը: Փոքր բիզնեսը ավելի ամուր դիրքեր է զբաղեցնում արտադրության մեջ: Փոքր ֆիրմաների փոխգործունեությունը խոշոր ֆիրմաների հետ դառնում է ավելի ակտիվ, փոքր ֆիրմաների բազմազան ազդեցությունը խոշոր բիզնեսի հետ: Աճում է փոքր բիզնեսի դերը իննովացիոն տնտեսության զարգացման մեջ:

Հայաստանյան տնտեսության մեջ կարևոր տեղ ունեն փոքր ձեռնարկատիրության սեկտորը: Չնայած փոքր ձեռնարկատիրության դերին՝ տնտեսության առաջնային դերի համար հասարակության մեջ ամբողջությամբ մեծ դեր ունեն, դրանք ուղակիցվում են պետական քաղաքական հովանավորչությամբ, իսկ նրանց իրացումը իրենից ներկայացնում է անկախ մեծություն միասնական գործունեության մեջ, որը ելնելով առանձին պատճառներից չի ազդում տնտեսության սեզմենտի զարգացման վրա:

Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը հանդիսանում է կարևոր ցուցանիշ հաջող շուկայական ռեֆորմների իրականացման համար: Տնտեսագիտական գրականության վերլուծությունը և ունեցած վիճակագրական տվյալները փոքր ձեռնարկատիրության գործունեության մասին փաստում են փոքր ձեռնարկատիրության գործունեության մասին - նույնիսկ զարգացած շուկայական տնտեսություն ունեցող երկրներում, չնայած դրանով հանդերձ փոքր ձեռնարկությունների կայունությունը մնում է համեմատաբար ցածր: Փոքր ձեռնարկությունների աճի դեպքում, զարգացած ներքին կառուցվածքը և փոքր ձեռնարկատիրությանը պետական հովանավորությունը հանդիսանում է կարևոր գործոն որոշելու տնտեսական, սոցիալական խնդիրներ և բնակչության զբաղվածության հարցը: Ինչպես ցույց է տալիս զարգացած տնտեսություն ունեցող երկրների փորձը, փոքր ձեռնարկատիրության զարգացման հետ մեկտեղ աճում է ակտիվ բնակչության բաժինը, որն էլ մեծացնում է քաղաքացիների շահույթը և հարթեցնում է տարբեր սոցիալական խմբերի բարեկեցության տարբերությունները: Փոքր բիզնեսի օգնությամբ մոբիլիզացվում են նյութական, ֆինանսական և բնական պաշարները և բարձրանում է նրանց օգտագործման արդյունավետությունը:

Ներկայումս կատարվող արմատական փոփոխությունների հետևանքով համաշխարհային զարգացման ձևախեղումները զգալիորեն ուժեղացնում են սոցիալական գործոնի նշանակությունը հասարակական զարգացման մեջ, որի մեջ փոքր բիզնեսը կարևոր դեր է խաղում: Տնտեսապես զարգացած երկրները այսօր շեշտը դնում են պետական սոցիալական կայունության վրա, ընտրելով հետագա հեռանկարային զարգացման սոցիալական մոդել շուկայական տնտեսության մեջ: Դրանով հանդերձ, այդպիսի տնտեսական կարգուկանոնի ստղծման համար առաջնային է փոքր ձեռնարկատիրության դերը:

Գիտության կողմից կուտակվել է մեծ փորձ փոքր ձեռնարկատիրության խնդիրների հետազոտման ուղղությամբ: Նրանց մշակման մեջ են ընդգրկվել բազմաթիվ գիտնականներ, սկսած տնտեսագիտության հիմնադիրներ Ա.Սմիթից և Դ.Ռիկարդիից: Բավականին նշանակալի մշակումներ տնտեսագիտության մեջ կապված են փոքր բիզնեսի և տնտեսական աճի հետ, արտահայտված են այնպիսի հեղինակների մոտ, ինչպես օրինակ. Վեբեր Մ., Գելբրեյտ Դ., Դոմար Ե., Քեյնս Զ., Կոռնայ Յա., Մարշալլ Ա., Մյուրդալ Գ., Օսլունդ Ա., Ֆրիդման Մ., Հայեկ Ֆ., Հարրորդ Ռ., Շումպետեր Ի. և այլք:

Սակայն, չնայած նրան, որ կայացման խնդիրների առանձին ասպեկտներ և զարգացումներ իրենց տեղն են գտել բազմաթիվ գիտնականների հետազոտություններում, համախմբված մոտեցումը փոքր ձեռնարկատիրության բնագավառում ուսումնասիրելու համար պահանջում է խորը հետազոտություններ և հատկապես դա վերաբերում է բարձր մակարդակներին: Ներկայումս փոքր ձեռնարկատիրության սեկտորի

հետազոտության համար բավարար ուշադրություն է դարձվում փոքր բիզնեսի ազդեցության ուսումնասիրությանը:

Վերջին տարիներին փոքր բիզնեսի ուսումնասիրությունը ձեռք է բերել նոր տեղեկանքներ: Նախ, ժամանակակից ցուցանիշները փորձում են դիտարկել փոքր բիզնեսի զարգացումը նորարարության մակրոտնտեսական կոնտեքստի մեջ: Երկրորդ, փոքր ձեռնարկատիրության սեփական գործունեությունը ուսումնասիրելիս այս կամ այն երկրում տնտեսագիտության մեջ առավելությունը տրվում է ինտենսիվ զարգացման հարցերին, նախ և առաջ նրա իննովացիոն հնարավորություններին:

Հետազոտության նպատակը:

Աշխատանքի գլխավոր նպատակն է ՀՀ և զարգացած երկրների փոքր և միջին ձեռնարկությունների տնտեսական գործունեության զուգահեռ վերլուծման հիման վրա ապացուցել, որ նրանց գործունեությունը ազդում է ազգային տնտեսության զարգացմանը:

Հետազոտության խնդիրները:

- Զարգացած երկրների փոքր և միջին ձեռնարկությունները դիտարկել որպես ազգային տնտեսության արդյունավետության խթան:
- ՀՀ փոքր ձեռնարկությունները դիտել որպես ազգային տնտեսության արդյունավետության խթան
- Մանր և խոշոր արդյունաբերությունների սինթետիկ արդյունավետությունը արտասահմանյան փորձի վերլուծման հիման վրա:
- Իրականացնել փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսական պաշարների աղբյուրների և նրանց արդյունավետության գնահատման արտասահմանյան փորձի վերլուծությունը:
- Իրականացնել ՀՀ փոքր և միջին ձեռնարկությունների հարկային մեթոդների արդյունավետության վերլուծումը:

Ատենախոսության օբյեկտը և առարկան:

Ատենախոսության օբյեկտն է ՀՀ և զարգացած երկրների փոքր և միջին ձեռնարկությունները; Առարկան դրանց արդյունավետության բարձրացման ուղիներն է:

Ատենախոսության տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը:

Աշխատանքի տեսական և մեթոդական հիմքը համարվում է ՀՀ օրենսդրական փաստաթուղթը: Աշխատանքի ընթացքում կիրառվում է համակարգային վերլուծության մեթոդը, ինչպես նաև կիրառվում են տնտեսագիտավիճակագրական մեթոդներ:

Տեղեկատվական բազա է համարվում հայրենական և արտասահմանյան հեղինակների աշխատանքները փոքր և միջին ձեռնարկությունների կառավարման և վերլուծության հարցերի գծով. և մասնավորապես ձեռնարկությունների տնտեսական գործունեության արդյունավետության մասով պետական կառավարման մանրմիջինների օրենսդրական ակտերը, ձեռնարկության հաշվապահական և վիճակագրական նյութերը:

Աշխատանքի գործնական կիրառությունը կայանում է նրանում, որ վերլուծական մեխանիզմի մշակումը և ներդրումը ՀՀ էկոնոմիկայի Նախարարությունում և նրա տարբեր ձեռնարկություններում, կապահովեն անհրաժեշտ արդյունավետություն:

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքները և նորույթը:

1. Ձարգացած երկրների ազգային տնտեսության մակրոտնտեսական արդյունավետության խթան հանդիսացող փոքր և միջին ձեռնարկությունների գործող մեխանիզմների համապարփակ վերլուծության արդյունքներից բխող առաջարկություններ այն Հայաստանի Հանրապետության փոքր և միջին ձեռնարկություններում կիրառելու համար: Կարևորվում է ձեռնարկությունների զարգացման ֆինանսական պաշարների ստեղծման, ինչպես նաև փոքր և միջին ձեռնարկությունների համագործակցության արդյունավետության գնահատման վերաբերող առաջարկություններ:
2. Հայաստանի Հանրապետության ազգային տնտեսության մակրոտնտեսական արդյունավետության խթան հանդիսացող փոքր և միջին ձեռնարկություններում գործող մեխանիզմների համապարփակ վերլուծության արդյունքներից, ինչպես նաև զարգացած երկրների փորձի գործնական կիրառման հնարավորություններից բխող առաջարկություններ այն ՀՀ փոքր և միջին ձեռնարկություններում կիրառելու համար: Կարևորվում է ձեռնարկության հարկման մեխանիզմների վերաբերող առաջարկությունները:
3. Հայաստանի Հանրապետության փոքր և միջին ձեռնարկությունների հիմնական միջոցների և արտադրական պաշարների ֆինանսական հաշվառման միջազգային ստանդարտների ՖՀՄՍ-16 “Հիմնական միջոցներ” և ՖՄՀՄ-2 Պաշարներ ընդհանուր դրույթների և հիմնական պահանջների օգտագործման տնտեսական արդյունավետության գնահատման և հաշվառման մեթոդների նորաստեղծումը:
4. Ձարգացած երկրների և Հայաստանի Հանրապետության ազգային տնտեսության արդյունավետության խթան հանդիսացող փոքր և միջին ձեռնարկություններում գործող մեխանիզմների վերլուծության և կատարված առաջարկությունների հիման վրա փոքր և միջին ձեռնարկությունների մաշտաբային և մոլտիպլիկացիոն արդյունավետության գնահատման մեթոդները: Կարևորվում է ձեռնարկության կառավարման արդյունավետության գնահատման մեթոդները:

Հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը և օգտագործումը:

Աշխատանքի գործնական կիրառությունը կայանում է նրանում, որ վերլուծական մեխանիզմի մշակումը և ներդրումը ՀՀ էկոնոմիկայի Նախարարությունում և նրա տարբեր ձեռնարկություններում, կապահովեն անհրաժեշտ արդյունավետություն:

Հետազոտության փորձարկումը: Հետազոտության հիմնական դրույթները քննարկվել են Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի տնտեսագիտության ֆակուլտետի և ՀՀ ԳԱԱ Տնտեսագիտության ինստիտուտի գիտաժողովներում:

Հրապարակումներ: Ատենախոսությունում քննարկված հայեցակարգերն և իրենց նախնական լուսաբանումն են ստացել հեղինակի կողմից ՀՀ-ում հրապարակված գիտական 3 հոդվածներում:

Հետազոտության կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը կազմված է ներածությունից, երեք բաժիններից, վերջաբանից, գրական ցանկից և հավելվածից: Աշխատանքը պարունակում է 154 տեքստային էջ, տեսական և մեթոդական դրույթներ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության **ներածությունում** հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակը և խնդիրները, ուսումնասիրության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը, ձևակերպված են ստացված գիտական արդյունքները և նորույթը, ինչպես նաև ստացված արդյունքների գիտազործնական նշանակությունը:

Աշխատանքի առաջին գլխում՝ **Փոքր և միջին ձեռնարկությունը որպես զարգացած երկրների ազգային տնտեսության մակրոտնտեսական արդյունավետության բարձրացման խթան** քննարկվել են ձեռնարկության գործունեության տեսակները և նրանց առանձնահատկությունները, զարգացած երկրների փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման արդյունավետության վերլուծության և մաշտաբների մոլտիպլիկատիվ արդյունավետության գնահատման մեթոդների արդիականացման տեսական հարցերը:

Չնայած մասնավոր ձեռնարկատիրության բոլոր դժվարություններին և խնդիրներին Հայաստանում, այսօր զբաղված են արդեն հազարավոր մարդիկ: Սեփական բիզնես ունենալ ցանակցողները ավելի ու ավելի են շատանում և ավելի է մեծանում ձեռնարկատիրություն սկսողների թվաքանակը: Պոլ Սամուելսոնը այդ ցանկության մասին գրել է. «Մարդիկ միշտ ցանկանում են սկսել ինքնուրույն գործ... Եթե նույնիսկ նրանց երբեք չի հաջողվում վաստակել ավելին, քան տարեկան մի քանի հազար դոլար, բոլոր դեպքերում կա ինչ-որ գայթակղիչ մի բան հնարավորություն կառուցելու սեփական պլանները և իրականացնելու բազմաբնույթ խնդիրներ, ձեռնարկատերը հակում ունի ամենօրյա լուծում տալու մանր հարցերին»:

ԱՄՆ-ում ֆիրմաների ընդհանուր թվաքանակի մեջ 73%-ը ներկայացնում են այն ֆիրմաները, որոնք գտնվում են միասնական մասնավոր սեփականության մեջ և 17%-ը կորպորատիվ ֆիրմաներն են: Մեծ Բրիտանիայում 54,7%-ը համարվում են անհատական ձեռնարկությունները, 25,6%-ը ընկերակցությունները և միայն 18,6%-ը հանդիսանում են բաժնետիրական ձեռնարկություններ:

Դիտարկելով փոքր և միջին բիզնեսի դերը ազգային տնտեսության մեջ, կարելի է առանձնացնել մի քանի փաստեր, որոնց շնորհիվ փոքր և միջին բիզնեսը ավելի մեծ նշանակություն է ձեռք բերում երկրի տնտեսության մեջ: Այսպես, այն չի պահանջում խոշոր ներդրումներ, սակայն դրանով հանդերձ ապահովում է պաշարների մեծ շրջանառություն բարձր աճի տեմպերով:

Անկախ ձեռնարկության գործունեության տեսակներից և նրանց առանձնահատկություններից, փոքր և միջին ձեռնարկությունների ստեղծումը հանդիսանում է կարևոր ցուցանիշ ազգային տնտեսության արդյունավետությունը գնահատելու համար: Արևմտյան տնտեսագիտական ռազմավարության մեջ անցյալ դարի 80-ան թվականներից Փոքր և միջին ձեռնարկատիրության հեղինակությունը սկսեց բարձրանալ 80- ական թվականներին, որին նպաստեցին նոր աշխատատեղերի ստեղծումը և նորարարությունների ներդրումը: Փոքր և միջին ձեռնարկությունները առաջացել են գերազանցապես շուկայական առևտրի մեջ և ծառայությունների ոլորտում: Սակայն նրա աճի տեմպերը գերազանցում են տնտեսագիտության այնպիսի ոլորտներում, ինչպես էլեկտրոնիկան, կենսատեխնիկան, տեղեկատվական ծառայությունները: Փոքր և միջին ձեռնարկատիրությունը որակական նոր ձեռքբերում է ստացել՝ դառնալով ժամանակակից գիտա-տեխնիկական փուլի իրացման կարևոր ձև, որի զարգացումը պայմանավորված է շուկայական տնտեսության մեջ գոյություն ունեցող փոքր և միջին ձեռնարկություններով:

Բնակչության լայն զանգվածներին ներքաշելով շուկայական հարաբերությունների համակարգի մեջ ապահովում է այդ համակարգի կայունությունը: Արտերկրի գիտնականների կարծիքով համակարգի կայունությունը ապահովվում է այն պայմաններում, երբ քաղաքացիների 20-30%-ը ունի սեփական գործ:

Սակայն նույնիսկ ետ մնացող շուկայական տնտեսությամբ երկրները, բարենպաստ ներքին կառուցվածքով բարձր ցուցանիշներով մանր ֆիրմաները՝ ունենում են դժվարություններ իրենց գործի նախնական փուլում: Փոքր

Ֆիրմաները ունեն բարձր կախվածություն ներքին միջավայրի ազդեցությունից և զգայուն են անբարենպաստ փոփոխություններից: ԱՄՆ-ում ամեն տարի ստեղծվում են շուրջ 600 հազար փոքր ձեռնարկություններ, սակայն նրանց կեսը դադարեցնում է իր գործունեությունը առաջին 18 ամսվա ընթացքում: Դանիայում ամեն տարի հանդես են գալիս շուրջ 15 հազար բացարձակապես նոր ձեռնարկություններ, սակայն հինգ տարի հետո նրանցից միայն 58% է կարողանում դիմակայել շուկայում:

ՄԱԿ-ի փորձագետների տվյալներով փոքր ձեռնարկատիրության մեջ զբաղված է աշխարհի բնակչության շուրջ 50%-ը: Զարգացած երկրների համար այս ցուցանիշը զգալիորեն բարձր է:

Շուկայական տնտեսության մեջ փոքր և միջին ձեռնարկատիրության անհատները զարգանում են երկու ուղղությամբ. փոքր և միջին ֆիրմաների ինքնուրույն զարգացումը և փոքր և միջին ձեռնարկությունների կառույցի գործունեությունը խոշոր ընկերություններում:

Առաջին ռազմավարությունը - դա փոքր և միջին ձեռնարկությունների ինքնուրույն զարգացումն է - այն կապված է այնպիսի ուղղությունների ընտրության հետ, որտեղ ձեռնարկության չափը չի ազդում նրա արդյունավետության վրա և կարող է գոյատևել երկար, հաջող մրցակցել տարբեր այլ ձեռնարկությունների հետ, որոնք կարող են թափանցել այնպիսի ոլորտներ, որտեղ ձեռնարկության չափերը չունեն էական նշանակություն:

Զարգացման այլ ռազմավարություն է համարվում փոքր և միջին ձեռնարկությունների գործունեությունը խոշոր ընկերություններում: Փոքր և միջին ձեռնարկությունները սերտորեն կապված են արտադրական կապերի գծով ընկերակցությունների հետ և նոր տեխնոլոգիաների զարգացման հետ, ինչպես նաև վաճառքի կազմակերպման հետ: Տվյալ ֆունկցիան կատարում են բազմաթիվ փոքր և միջին ձեռնարկություններ ի դեմս մեծածախառևտրային ֆիրմաների:

Փոքր ձեռնարկատիրության չափանիշների որոշումը շատ երկրների համար նշանակում է պետական ծրագրերի հովանավորության արդյունավետություն և փոքր ձեռնարկությունների զարգացում, ինչպես նաև կայուն ուղղվածություն փոքր ձեռնարկատիրության բնագավառում: Սակայն մինչ օրս շատ երկրներ չեն որոշակիացրել իրենց մոտեցումները փոքր ձեռնարկություններ հասկացության նկատմամբ, այդ պատճառով առաջանում են խնդիրներ - երբ համեմատական դիտարկում է արվում փոքր և միջին ձեռնարկատիրության նկատմամբ:

Ինչպես ցույց է տալիս համաշխարհային և հայրենական փորձը, հիմնական համեմատական նշանները համարվում են աշխատողների թվաքանակը, ակտիվների հաշվեկշռային արժեքը, շրջանառության ծավալը և սահմանադրական կապիտալի չափը: Համաշխարհային բանկի տվյալներով ցուցանիշների ընդհանուր քանակը, որը վերաբերում է ձեռնարկություններին գերազանցում է 50:¹

Եվրոպական Միությունում և ԱՄՆ-ում վիճակագրությունը ձեռնարկությունները համարում է բացառապես փոքր բիզնես միայն մեկ չափանիշով - աշխատողների թվաքանակով, այն դեպքում, երբ փոքր և միջին ձեռնարկատերերը պետական ծրագրերի հովանավորման կարիք ունեն:²

Ըստ Եվրոպական հանձնաժողովի՝ պետական ծրագրերում կիրառվում են հետևյալ տվյալները. ձեռնարկությունները հաշվի են առնում փոքր և միջին ձեռնարկատիրությանը, եթե այնտեղ աշխատում են մինչև 250 աշխատող և ունի տարեկան 50 մլն եվրոյի շրջանառություն կամ նվազագույնը 43 մլն եվրո ակտիվներ. փոքր ձեռնարկությունները, եթե աշխատողների թվաքանակը կազմում է մինչև 50 մարդ, տարեկան շրջանառությունը կամ ակտիվները չպետք է գերազանցեն 10 մլն եվրոն, նաև փոքր ձեռնարկությունները – որոնք ավելի քան 10 աշխատող ունեն և տարեկան շրջանառությունը կամ ակտիվները՝ մինչև 2 մլն եվրո:³

ԱՄՆ-ում գոյություն ունեն չափանիշներ, որոնք կիրառվում են արդյունաբերության բոլոր ոլորտներում: Ամենահիմնական չափանիշներն են. – 500 աշխատող արտադրության և ածխարդյունաբերության ոլորտում; 100 աշխատող մեծածախ առևտրի համար:

¹Использован электронный источник [www. Bestreferat.ru/referat-51946.html](http://www.Bestreferat.ru/referat-51946.html).

²Мировая практика и рекомендации для Казахстана по определению и измерению малого бизнеса. www.ksbd.kz/page.php?page-id=414&lang=1

³Мировая практика и рекомендации для Казахстана по определению и измерению малого бизнеса. www.ksbd.kz/page.php?page-id=414&lang=1

4.Պ. Սամարիցի կարծիքով զարգացած երկրներում տնտեսությունը առանձնացնում է փոքր ձեռնարկությունների հետևյալ տեսակները – կախված նրանից, թե ինչպիսի ռազմավարություն են նրանք որդեգրել և արտադրության ինչպիսի տեսակներ են նրանք ընտրում շուկայում:⁴

Չափանիշների ուսումնասիրման հիմքի վրա, որ կիրառվում են որոշելու փոքր և միջին ձեռնարկությունները արտերկրում, կարելի է ենթադրել, որ մեկ միասնական համընդհանուր եկամտաբեր փոքր և միջին բիզնեսում գոյություն ունի բազմաթիվ սահմանումներով, որոնք հենվում են տարբեր չափանիշների հիման վրա և ընդունված են տարբեր երկրներում: Հավանաբար, միակը կարելի է համարել այն, որ նրանք ընդգծում են անկախություն փոքր և միջին ձեռնարկություններում ավելի խոշոր ձեռնարկությունների հսկողության տակ, կամ այն խմբի մեջ, որ ունեն սեփականության իրավունք:

Հարկ է նշել, որ փոքր և միջին ձեռնարկությունների բիզնեսի տոկոսը ֆիրմաների ընդհանուր քանակի մեջ մեզանում դիտարկված արտասահմանյան երկրներում մնում է բարձր և կայուն: ԱՄՆ-ում փոքր ձեռնարկությունների քանակը եականորեն չի փոխվել ժամանակի մեջ, դա պետք է բացատրել նրանով, որ իր զարգացման ընթացքում և նաև տնտեսության մեջ տեղի ունեցող փոփոխությունները դարձան խոշոր ֆիրմաներ, երբ որոշ խոշոր ֆիրմաներ, հակառակ դարձան փոքր ձեռնարկություններ: Չնայած փոքր բիզնեսը դերը ԱՄՆ-ի տնտեսության մեջ ամբողջությամբ մնացել է անփոփոխ, սակայն փոխվել է փոքր և միջին ձեռնարկությունների դերը և ազդեցությունը երկրի տնտեսության վրա: Հատկապես գործարար ակտիվության շրջապատյալի մեջ: Այսպես, հենց փոքր ձեռնարկություններն են դարձել այն լուկոմոտիվը, որը նպաստել է հաղթահարելու ԱՄՆ-ի տնտեսության անկումը: Պետք է խոստովանել, որ փոքր և միջին ձեռնարկությունների բիզնեսն է համարվում հիմնական շարժիչ ուժը Կանադայի տնտեսության զարգացման մեջ:⁵

Փոքր և միջին ձեռնարկությունները հանդիսանում են տնտեսության մեջ կարևոր ներդրողներ: Օրինակ, չնայած նրան, որ հիմնականում Ֆրանսիայում են մնում խոշոր ձեռնարկությունները, չի կարելի չնշել, որ 2006թ.-ին նյութական ակտիվների շուրջ 45% ներդրումային ծավալը ընկնում է փոքր և միջին բիզնեսի վրա:

Համաշխարհային տնտեսության մեջ ամբողջությամբ միջին և փոքր ձեռնարկություններում զբաղված է աշխատունակ բնակչության զրեթե 50%-ը: Այնպիսի երկրներում, ինչպես Ճապոնիան և Շվեյցարիան են, փոքր ձեռնարկություններում կենտրոնացված է աշխատուժի գերակշռող մասը: ԱՄՆ-ում նրանց բաժին է ընկնում մասնավոր ցեկտորում զբաղվածների շուրջ կեսը, Կանադայում – 60%-ը ընդհանուր զբաղվածների: Յուսիսային Ամերիկայում փոքր և միջին ձեռնարկությունները 60-75%-ով ապահովում են նոր աշխատատեղերը:⁶

ԱՄՆ-ի համար բնութագրական է այն, որ աշխատողների թվաքանակի մեծ մասը զբաղված են փոքր ձեռնարկություններում: 1988-1994թ.թ. փոքր ձեռնարկությունների և խոշորների աշխատողների թվաքանակը առաջինների հաշվին կազմել է 6-8 մլն մարդ, 2000թ.-ին այն կրճատվել է զրեթե մինչև 180 հազար մարդով: 2001թ.-ին երբ տնտեսության մեջ նկատվեց անկում, փոքր ձեռնարկություններին բաժին ընկավ մասնավոր սեկտորում զբաղվածների ընդհանուր թվաքանակի 49,9%, որը կարելի է համարել որոշակի թվով ձեռնարկությունների լուծարում անկման փուլում: 2002թ.-ին դարձյալ նկատվեց աշխատողների թվաքանակի աճ փոքր ձեռնարկություններում մեծերի նկատմամբ:⁷

Եվրոպայի զարգացած երկրներում, որ ներառված են «Եվրոպա-19» պայմանական խմբում, փոքր և միջին բիզնեսի ձեռնարկությունները զբաղված են զբաղվածների ընդհանուր թվաքանակի ավելի քան երկու երրորդը, սրանով հանդերձ փոքր և միջին ձեռնարկությունները նույնպես իրենց զգալի ներդրումն ունեն նոր աշխատատեղերի ստեղծման հարցում. այսպես, Մեծ Բրիտանիայում 90-ական թ.թ փոքր և միջին ձեռնարկությունների կողմից ստեղծվել է զրեթե երկու անգամ ավել աշխատատեղ մեծ ֆիրմաների համեմատ:

Եվրոպական Միության 15 երկրներում փոքր և միջին բիզնեսին բաժին է ընկնում.

- 72 մլն. մարդ, որը կազմում է այդ երկրում զբաղվածների ընդհանուր թվաքանակի 3/4 մասը;
- 16,2 մլն. ֆիրմա այդ երկրի ընկերությունների ընդհանուր գրանցվածներից, այսինքն՝ 99,9%;
- Համախառն արդյունքից 70% ավել:

⁴Основаы предпринимательства, учебное пособие / В.П. Самарина. – М.2010-224 с.

⁵Bureau des petites et moyennes enterprises/Source electronique/

⁶Bureau petites et moyennes enterprises/Source electronique/

⁷The Small Business Economy; A Report to the President.- P. 210, 216-219.

Դրանով հանդերձ 10 տարվա ընթացքում փոքր ձեռնարկություններում զբաղվածների թվաքանակը աճել է 45%-ով երբ միջին ձեռնարկությունները կրճատվել են:

Ինչպես ցույց է տալիս զարգացած շուկայական տնտեսություն ունեցող երկրների փորձը՝ փոքր և միջին ձեռնարկատիրությունը նպաստում է.

- բարձրացնելու արտադրության արդյունավետությունը, որը համարվում է մրցակցության լրացուցիչ աղբյուր;
- միջին և խոշոր ընկերություններում մախադրյալների ստեղծում փոքր ձեռնարկությունների ձևավորման համար;
- նոր տեխնոլոգիաների, նոր տեսականու ներդրում;
- նոր շուկաների գրավում, որոնք ընկերությունները համարում են ոչ լիարժեք, դրանով ընդլայնելով սպառողական ապրանքների տեսականին;
- բնակչության զբաղվածության աճը և շրջակա միջավայրի պահպանությունը:

Ատենախոսությունում քննարկվում են փոքր բիզնեսում մաշտաբների և մուլտիպլիկատիվ արդյունավետության գնահատման մեթոդների արդիականացման հարցերը: Փոքր ձեռնարկատիրությունը հանդիսանում է հասարակական արտադրության ճյուղերից մեկը և մուլտիպլիկատորի կիրառումը տնտեսության վրա նրա ազդեցությունը գնահատելու համար ընդունելի է: Ավելին, Քեյնսիանյան տեսության շրջանակներում ձեռնարկատիրության մուլտիպլիկատորը հիմնավորում է ձեռնարկատիրության դրական ազդեցությունը արտադրության արդյունավետության և աճի վրա:

«Մուլտիպլիկատոր» հասկացությունը (լատ. multiplier - բազմացնող, շատացնող) ներդրվել է տնտեսագիտության մեջ 1931թ. անգլիացի տնտեսագետ Ռիչարդ Կանի կողմից: Այն դիտարկում է մուլտիպլիկատորի զբաղվածության գործունեությունը այնտեղ, որ պետական ծախսերի արդյունքները հասարակական աշխատանքների վրա առաջանում են ոչ միայն այդ աշխատանքների «առաջնային զբաղվածությունից», այլ նաև նրա հետևանքով առաջացած երկրորդային, երրորդային և այլն: Այսպիսով, տեղի է ունենում զնոդունակ ունակությունների «մուլտիպլիկացիա» և զբաղվածություն, որը առաջանում է մախ ծախսերից:⁸

Քեյնսը «մուլտիպլիկացիոն զբաղվածության» հետ մեկտեղ առաջ է քաշել նաև նոր կատեգորիա - «եկամտի մուլտիպլիկացիա», կամ «ներդրումների մուլտիպլիկացիա»: Քեյնսի մուլտիպլիկատորը արտահայտում է եկամտի աճի հարաբերությունը ներդրումների աճի հետ:

Արդյունաբերության բնագավառում արտադրության մեջ ծավալի մեծացման յուրաքանչյուր մեծություն, որը արտադրում է ապրանքներ և մատուցում ծառայություններ, համապատասխանում է ձեռնարկատիրության հասույթի մեծությանը: Ստացվում է, որ յուրաքանչյուր դրամը, որ ծախսվում է ձեռնարկատիրոջ կողմից, կարող է բարձրացնել ապրանքների նկատմամբ հավաքական պահանջարկը ավելի շատ, քան այն, որ հանդիսանում է փոքր ձեռնարկատիրության մուլտիպլիկատորի արդյունքը համախառն արդյունքի նկատմամբ: Արդյունաբերական արտադրանքի ծավալի աճը, որը ձեռնարկատերերը ուղղում են դեպի սպառմանը ծախսերի տեսքով իրենց աշխատողներին աշխատավարձ վճարելու համար, ֆիրմայի զարգացման համար, պատվերների համար հանդիսանում է մուլտիպլիկատորի արդյունքի քանակական արտահայտում, որն առաջանում է արտադրության ծավալի աճի հետևանք և փոքր ձեռնարկատիրության ծառայություն:

Այդ մուլտիպլիկատորի հանդես գալը հիմնվում է երկու գործոնների վրա: Նախ-առաջինը, տնտեսագիտության համար բնութագրական են կրկնվող, անընդմեջ ծախսերի հոսքեր և եկամուտներ, որտեղ փողը, որ ծախսվում է մեկ անհատի կողմից եկամտի տեսքով, ստանում է մեկ ուրիշը: Երկրորդը, ցանկացած եկամտի փոփոխություն իր մեջ կրում է փոփոխություն, կուտակում, ինչպես նաև սպառում:

Այս երկու գործոններից հետևում է, որ ծախսերի մեծության արմատական փոփոխությունը տանում է շղթայական ռեակցիայի, որը չնայած որ հանգում է յուրաքանչյուր հերթական ցիկլի հետ, սակայն բերում է նաև բազմակի փոփոխությունների:


⁸Сурин А.И., Историяа экономики и экономических учении, учеб.посопие./А.И. Сурин.-М.:Финансы и статистика,2002.-с.141.

Ատենախոսության երկրորդՓոքր և Միջին ձեռնարկություններում ֆինանսական հաշվառման միջազգային ստանդարտների կիրառումը, որպես ՀՀ ազգային տնտեսության մակրոտնտեսական արդյունավետության բարձրացման խթան՝ պատշաճ մակարդակով լուսաբանվել են Հայաստանի Հանրապետության փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման վերլուծությունը:

Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը ՀՀ տնտեսության զարգացող ոլորտներից մեկն է: ՓՄՁ Հայաստանում շարունակում է զարգանալ առաջանցիկ տեմպերով, ինչի վկայությունն է այն փաստը, որ 01.01.2010թ. դրությամբ գրանցված առևտրային իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի ընդհանուր թվաքանակը⁹ կազմել է 136,008, այն դեպքում երբ 2003փ2005 թվականների ընթացքում ստեղծվել են տվյալ ոլորտի 25 հազար սուբյեկտներ (2004թ. 8.889 և 2005՝ 9.445):

Ընդ որում, միայն 2004 թվականին ստեղծվածների շնորհիվ հանրապետությունում ապահովվել է ավելի քան 22 հազար աշխատատեղ: 2006 թվականի ընթացքում գրանցված տնտեսվարող սուբյեկտների թվաքանակը 2005 թվականի ընթացքում գրանցվածների նկատմամբ աճել է 6.8 տոկոսով և կազմել է 10,320¹⁰: ՀՀ ՓՄՁ սուբյեկտներում զբաղվածների տեսակարար կշիռը ընդհանուր զբաղվածների մեջ 2007, 2008 և 2009 թվականներին կազմել է՝ համապատասխանաբար 40.07, 42.1 և 42.2 տոկոս¹¹:

Դիտարկվում է ՓՄՁ տեսակատար կշիռը երկրի համախառն ներքին արդյունքում. (տես գծապատկերը)



ՓՄՁ տեսակարար կշռի դինամիկան ՀՆԱ-ում 2002-2009 թթ.

Վերը նշված ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս որ վերջին տարիներին ՀՀ-ում արձագրված ՀՆԱ աճի միտումները 2009թ. չեն պահպանվել՝ կապված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետ: 2009թ. ՀՆԱ-ի աճ է արձանագրվել միայն ծառայությունների մատուցման ոլորտում: Չնայած ՀՆԱ-ի որոշակի նվազմանը, ՓՄՁ ոլորտի տեսակարար կշիռը 2009թ. ՀՆԱ-ի մեջ աճել է, կապված այն հանգամանքի հետ, որ ֆինանսատնտեսական ճգնաժամից ՀՀ-ում առավելապես տուժել են խոշոր ձեռնարկությունները, իսկ ՀՀ Կառավարության նախաձեռնած հակաճգնաժամային ծրագրերը մեղմացրել են դրա ազդեցությունը ՓՄՁ սուբյեկտների վրա / տես աղյուսակ 2.1.2/:

⁹Ըստ ՀՀ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության տրամադրած տեղեկատվության:

¹⁰Ատենախոսությունում բերված տվյալները վերցված են «Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտը Հայաստանում 2003-2004, 2004-2005, 2005-2006, 2006-2007, 2006-2008 և 2007-2009 թթ» տեղեկագրից և 2004-2006 թթ. Հայաստանի ՓՄՁ ՁԱԿ հաշվետվություններից, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2004, 2005, 2006, 2007, 2008 և 2009 թթ» վիճակագրական- վերլուծական զեկույցներից.:

¹¹Ներառված չեն պետական կառավարման համակարգում և գյուղացիական տնտեսությունում զբաղվածները:

Աղյուսակ 2.1.2

ՓՄՁ սուբյեկտների տեսակարար կշիռը ՀՀ ՀՆԱ-ում ըստ տնտեսության ճյուղերի 2004 - 2009 թթ.

Ճյուղ	2004 թ [%]	2005 թ [%]	2006թ [%]	2007 թ [%]	2008 թ [%]	2009 թ [%]
Արդյունաբերություն	29.7	25.4	26.5	27.9	22.3	30.6
Շինարարություն	43.1	45.9	47.8	41.2	48.5	37.2
Առևտուր	58.4	51.2	45.5	47.3	51.4	49.4
Տրանսպորտ և կապ	33.3	33.8	27.7	28.6	20.8	28.0
Ծառայություններ	34.1	42.8	41.9	42.3	45.0	45.0
ԸՆԴԱՄԵՆԸ ՀՆԱ ¹²	38.6	39.8	40.3	41.0	41.7	42.5

Աղյուսակում ներկայացված ցուցանիշները ստացվել են հիմք ընդունելով տնտեսության յուրաքանչյուր ճյուղում արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) թողարկման բաշխվածությունն ըստ ՓՄՁ սուբյեկտների և խոշոր կազմակերպությունների, արտարկման մեթոդի կիրառմամբ: Արդյունքում, հնարավոր է դարձել գնահատել ՀՀ-ում ՓՄՁ սուբյեկտների տեսակարար կշիռը:

Ատենախոսությունում բերված տվյալների հիման վրա կատարվել է ՓՄՁ համապարփակ վերլուծություն, որոնց արդյունքները ամփոփվել է տասը աղյուսակներում:

- 2004 - 2009 թվականներին ՀՀ ՀՆԱ-ի աճում գերփոքր, փոքր և միջին սուբյեկտների դերը տնտեսության հիմնական ճյուղերի աճի մեջ:
- 2003-2009 թթ. ՀՆԱ-ի կառուցվածքը տնտեսության ճյուղերով ըստ ՓՄՁ սուբյեկտների և խոշոր կազմակերպությունների (Խ):
- 2004-2009 թթ. գերփոքր, փոքր և միջին կազմակերպությունների տեսակարար կշիռների դինամիկան ՀՀ ՀՆԱ-ի մեջ
- ՓՄՁ սուբյեկտների բաշխվածությունն ըստ տնտեսության ճյուղերի 2003-ի 2009 թթ.
- ՓՄՁ սուբյեկտների բաշխվածությունը երևանում և ՀՀ մարզերում
- Արտաքին առևտրաշրջանառության ծավալների դինամիկան 2003-ի 2009 թթ. ըստ ՓՄՁ սուբյեկտների և խոշոր կազմակերպությունների
- ՀՀ –ում ՓՄՁ զարգացման ինդեքսի դինամիկան
- ՀՀ-ում ՓՄՁ սուբյեկտներում զբաղվածների թվաքանակը 2003-ի 2009 թթ.
- ՓՄՁ սուբյեկտներում և խոշոր կազմակերպություններում¹³ աշխատողների թվաքանակի բաշխվածությունը ըստ տնտեսության ճյուղերի 2004-ի 2009 թթ. / տոկոս /
- 2004-ի 2009 թ.-ին ՀՀ պետական բյուջե վճարված հարկային մուտքերը, բացարձակ և հարաբերական արտահայտությամբ
- ՀՀ ՓՄՁ սուբյեկտների և խոշոր կազմակերպությունների վճարած պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների տեսակարար

կշիռը պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ ընդհանուր գումարում 2004-ի 2009 թթ.

Իրականացված վերլուծության արդյունքների և դուրս բերված ցուցանիշների հիման վրա հնարավոր է դառնում ձևավորել ՀՀ-ում ՓՄՁ ոլորտի վերաբերյալ ամբողջական պատկեր: Վերլուծությունն, անկասկած, թերի և ոչ ամբողջական կլիներ առանց ՀՀ և մի շարք զարգացող ու զարգացած երկրներում ՓՄՁ ոլորտը բնութագրող հիմնական ցուցանիշների համադրման և վերլուծության: Չնայած, որ իրականացված վերլուծության արդյունքում, գուցե, կարելի է ստանալ ՀՀ-ում ՓՄՁ ոլորտի ամբողջական պատկեր, այնուամենայնիվ, տարածաշրջանի և

¹² Առանց գյուղատնտեսության և զուտ հարկերի

¹³ Խոշոր կազմակերպությունների գծով ցուցանիշը հաշվարկվում է որպես 100 տոկոսի և ՓՄՁ ցուցանիշի տարբերություն:

աշխարհի այլ երկրների տնտեսություններում ընթացող տրանսֆորմացիոն գործընթացները, մասնավորապես, ՓՄՁ ոլորտում հաշվի առնելու և ՀՀ-ում նմանատիպ գործընթացների համադրումը և համապատասխան գույքահեռների անցկացումը, նյութն, անշուշտ, կարող են դարձնել առավել ամփոփ ու ավարտուն:

2008-2011 թվականներին Հայաստանի կառավարության կողմից առանձին ուշադրության արժանացավ ՓՄՁ ոլորտը: ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվեցին ինչպես վարկային երաշխավորություններ և ուղ-դակի վարկեր, այնպես էլ հարկային արտոնություններ:

Տնտեսության կայունացման վարկավորման ծրագրով ՓՄՁ ոլորտի համար նախատեսվեց 21.2 մլրդ դրամ ֆինանսավորում, որը տրամադրվել է ըստ ուղղությունների:

- ՓՄՁ ՁԱԿ-ի կողմից վարկային երաշխավորությունների տրամադրման և տնտեսավարող կազմակերպության սեփական կապիտալում ներդրում իրականացնելու ծրագրերի շրջանակներում բաշխվել է շուրջ 700 մլն դրամ գումար:

- 2009թ.-ի օգոստոսից հատուկ ՓՄՁ ոլորտը վարկավորելու կամ կապիտալի ֆինանսավորում իրականացնելու նպատակով ստեղծված “ՓՄՁ ներդրումներ” ՈւՎԿ ՓԲԸ-ի կողմից տրամադրվել են շուրջ 2 մլրդ դրամի վարկեր արդյունաբերական տարբեր ճյուղերում գործունեություն իրականացնող ընկերությունների, որից շուրջ 1.3 մլրդ ծավալի վարկավորումը իրականացվել է Օպերատիվ շտաբի կողմից հաստատված ծրագրերի գծով: Բացի տնտեսության կայունացման վարկավորման ծրագրի միջոցներից, ՓՄՁ ոլորտի ֆինանսավորում իրականացվել է նաև այլ աղբյուրներից:

ՓՄՁ հատվածում ներդրումները խթանելու նպատակով հարկային բեռը թեթևացնելու և հարկային արտոնություններ նախատեսելու միջոցով տնտեսավարողների համար ապահովվեց ազատ դրամական միջոցների առկայություն: Այսպես, ԱԱՀ հարկման շեմը բարձրացվեց մինչև 58.3 մլն դրա: Սա 32 հազար փոքր ու միջին ընկերությունների համար ապահովեց հարկային վարչարարության պարզեցում, ինչի հաշվին այդ ընկերություններում հարկերի գծով խնայողությունը կազմել է շուրջ 11 մլրդ դրամ: Այս փոփոխություններով նոր հնարավորություններ և ռեսուրսներ ստեղծվեց հաստատագրված հարկերի դաշտում աշխատող փոքր ու միջին սուբյեկտների համար՝ ընդլայնելու արտադրությունն առանց հարկային բեռի մեծացման:

Արդյունքում 2010 թվականին հաջողվեց Հայաստանի ՀՆԱ կառուցվածքի փոփոխություն արձանագրել. արդյունաբերության ճյուղի 9.7 տոկոս աճի շնորհիվ դրա մասնաբաժինը ՀՆԱ կառուցվածքում հասավ 15 տոկոսի՝ 2009 թվականի 13.8 տոկոսի փոխարեն: Շարունակական բնույթ կրող միջնաժամկետ միջոցառումներն իրենց դրական ազդեցությունը պահպանում են նաև 2011 թվականի: 2011 թվականի առաջին կիսամյակի տվյալներով արձանագրվել է արդյունաբերության ոլորտի 12.8 տոկոս աճ:

Հակաճգնաժամային քաղաքականության արդյունքների գնահատման, հետճգնաժամային կայունացման փուլում տնտեսության իրական հատվածի ներդրումային գրավչության բարձրացմանն ուղղված առավել արդյունավետ մեխանիզմների նույնականացմամբ Հայաստանում որդեգրվել է արդյունաբերական քաղաքականության սկզբունքները:

Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ հաստատվել է արդյունաբերական քաղաքականության հայեցակարգ, որի իրականացումը դառնում է առաջիկա տարիների գլխավոր հրամայականը:

2008 թվականին Հայաստանում մի շարք ոլորտներում նախաձեռնվեց արմատական բարեփոխման ծրագրեր, որոնց նպատակը ներդրումային և գործարար բարենպաստ միջավայրի ապահովումն է: Ծրագրերի մի մասն արդեն իսկ հաջողությամբ ավարտին է հասցվել, իսկ մի մասն ընթացքի մեջ է և այժմ էլ ներառված է կառավարության ծրագրային գերակայությունների շարք:

Հայաստանում իրականացրած և իրականացվող գործարար միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումները ներառում են հետևյալ հիմնական ուղղությունները.

- հարկային և մաքսային ոլորտ,
- բիզնեսի հիմնադրում և գրանցում,
- արտաքին առևտուր,
- քաղաքաշինական թույլ տվություններ,
- տեսչական բարեփոխումներ,

- տնտեսական մրցակցության ոլորտ:

ԱԱՀ հարկման շեմը նախկին 3 մլն դրամից մինչև 58.3 մլն դրամ բարձրացումն էապես հեշտացրեց հարկային վարչարարությունը բոլոր այն ՓՄՁ տնտեսվարողների համար, որոնք նախկինում համարվում էին ԱԱՀ վճարող. դրանք թիվը 32 հազար է:

Ներդրվել է ԱԱՀ-ի հարկային հաշիվների էլեկտրոնային եղանակով դուրս գրման սկզբունքորեն նոր համակարգ:

Ներդրվել են հարկ վճարողների հարցումներով պաշտոնական և ընթացիկ պարզաբանումների տրամադրման հստակ ընթացակարգեր: Գործարկվել են հարկ վճարողների սպասարկման 3 կենտրոններ՝ Երևանում և Վանաձորում, և հարկ վճարողների սպասարկման 4 սրահներ՝ այցելուների իրազեկումը մասնագիտացված կերպով ապահովելու նպատակով,:

Ներդրվել է ԱԱՀ ավտոմատ վերադարձման համակարգ:

Մի շարք օրենսդրական բարեփոխումներն էապես կրճատեցին հարկային մարմիններ ներկայացվող հաշվետվությունների քանակը և պարբերականությունը: Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ կազմակերպությունները, անկախ ԱԱՀ վճարող համարվելու հանգամանքից, այսուհետև հարկային մարմին չեն ներկայացնում ֆինանսական հաշվետվություններ (Ձև 1 և Ձև 2): Իրավական ակտերում կատարված փոփոխություններով հանվել են նաև պետական վիճակագրական հաշվետվությունների 1-Ֆ և 2-Ֆ ձևերը:

Տնտեսվարողներին հնարավորություն ընձեռնվեց հաշվետվությունը հարկային մարմին ներկայացնել էլեկտրոնային եղանակով: Հարկային հաշվետվության ներկայացման էլեկտրոնային համակարգի միջոցով այսօր արդեն կարելի է ներկայացնել 39 տեսակի հաշվետվություն, ընդ որում համակարգն անընդհատ կատարելագործվում է՝ ընդգրկելով հաշվետվությունների նոր տեսակներ: Էլեկտրոնային հաշվետվության համակարգից օգտվող հարկատուների թիվը 2011 թվականին հասել է 6100-ի:

Նշված միջոցառումների արդյունքում նվազագույնի է հասցվում հարկատու-հարկային տեսուչ ֆիզիկական շփումը՝ նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը, խնայելով հարկատուի ժամանակը և ռեսուրսները:

2011 թվականի ապրիլից իրավաբանական անձանց գրանցման բնագավառում ներդրեց “Մեկ պատուհանի” սկզբունքը, ինչի արդյունքում իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հիմնադրելու ցանկություն ունեցող անձը պետք է այցելի միայն մեկ կառույց: 2011 թվականի ապրիլից գործում է նաև ինտերնետային www.e-register.am կայքը, որի միջոցով իրավաբանական անձանց պետական գրանցման ռեգիստրի գործակալության կողմից մատուցվող ծառայությունը հասանելի է դարձել էլեկտրոնային եղանակով: Համակարգը հնարավորություն է տալիս գրանցել իրավաբանական անձ /անհատ ձեռներեցի դեպքում՝ հաշվառել ֆիզիկական անձ/ հաշված թույլների ընթացքում՝ գործընթացի ժամանակատարությունը հասցնելով նվազագույնի:

Լիցենզավորման գործընթացն էլ ավելի պարզեցնելու նպատակով 2010 թվականի երկրորդ կիսամյակից ֆիզիկական և իրավաբանական անձինք լիցենզավորման ենթակա որևէ գործունեությամբ զբաղվելու համար կարող են օրենսդրությամբ պահանջվող փաստաթղթերի պատճենները համապատասխան լիցենզավորող մարմին ներկայացնել էլեկտրոնային համակարգի միջոցով:

Արտաքին տնտեսական գործունեությամբ զբաղվող տնտեսվարողների համար բիզնես միջավայրն էապես բարեփոխվեց, մասնավորապես.

- էապես կրճատվել են ապրանքատեսակների արտահանման համար պահանջվող փաստաթղթերն ու ընթացակարգերը,
- կրճատվել է ներմուծման պահին պարտադիր սերտիֆիկացման ենթակա ապրանքների ցանկը՝ 65-ից նվազեցվելով 16-ի,
- պարզեցվել է արտահանվող երկակի նշանակության ապրանքների համար համապատասխան փորձագիտական տեղեկանք տալու ընթացակարգը. կրճատվել է փորձաքննություն իրականացնելու ժամկետը՝ 1 ամսից դառնալով առավելագույնը 10 օր, ինչպես նաև փորձաքննության վճարը՝ 180.000 դրամից դառնալով 60.000 դրամ,
- կրճատվել են տնտեսվարող սուբյեկտների կողմից հավաստագրման գործընթացի համար ծախսվող ժամանակը և ծախսը:

- Երեւոյնքի է ապրանքի ծագման երկրի հավաստագրի տրամադրման “Մեկ պատուհանի” սկզբունքը.

2011 թվականին “Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին” ՀՀ օրենքում կատարվեցին փոփոխություններ, որոնցով ապահովվեցին հետևյալ արդյունքները.

- հստակեցվել և խստացվել են մրցակցային օրենսդրության խախտումների համար սահմանված տուգանքների չափերը՝ համապատասխանեցնելով դրանք միջազգային չափանիշներին,
- ընդլայնվել են Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (ՏՄՊՀ) ապացուցողական կարողությունները՝ նախատեսելով դիտան-ցումներ և հսկիչ գնումներ կատարելու իրավասություններ,
- վերացվել են օրենքում առկա բազմաթիվ սողանցքները, հստակեցվել են հասկացությունները: Գնային չարաշահումների դեմ առավել արդյունավետ պայքար մղելու նպատակով օրենքում հստակ կարգավորում են ստացել գների չիմնավորված բարձրացման, իջեցման և պահպանման հետ կապված հարաբերությունները:
- գերիշխող դիրքի որոշման համար, բացի քանակական չափանիշներից, սահմանվել են նաև որակական չափանիշներ, որը հնարավորություն է տալիս գերիշխող դիրք ունեցող համարել շուկայում իրական ազդեցություն ունեցող այն տնտեսվարող սուբյեկտներին, որոնք քանակական ցուցանիշներով գերիշխող դիրք ունեցող չէին համարվի և չարաշահումների համար պատասխանատվության չէին ենթարկվի,
- չարաշահում թույլ տված գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտի լուծարման գործընթացը կանոնակարգվել է՝ ՏՄՊՀ-ին ընձեռելով գործի համապարփակ ուսումնասիրության հնարավորություն:
- առևտրային ցանցերի վերաբերյալ որոշ դրույթների վերանայման արդյունքում հնարավորություն է ստեղծվել կանխարգելել և բացառել խոշոր առևտրային ցանցերի կողմից տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտումները, որով բարենպաստ պայմաններ են ստեղծվել փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման համար:

Հաշվապահական հաշվառման բարեփոխումների շրջանակներում ՀՀ հաշվապահական հաշվառման մասին օրենքում 2008թ. ի դեկտեմբերի 26-ին ընդունված փոփոխությունների և լրացումների համաձայն ՖՀՄՍ-ը պետք է բանկերի կողմից պարտադիր կիրառվեն 2009թ. ի Հունվարի 1-ից վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների արձեթղթերի շուկայում հաշվետու թողարկողների կարգավորող շուկայի օպերատորի և այլն. Մնացած ՖՀՄՍ-ի ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով հրապարակումից հետո վեցամսյա ճամկետի ավարտին հաջորդող տարվա հունվարի մեկից:

Ատենախոսության հիմք ընդունելով օրենքի այս փոփոխությունը ՀՀ փոքր և միջին բիզնեսների հիմնական միջոցների և պաշարների ֆինանսական հաշվառման միջազգային ստանդարտների օրինակով ցույց է տրվում դրանց փաստացի կիրառման նշանակությունը:

«Հիմնական միջոցներ» ստանդարտները, հիմնական միջոցներ տերմինը օգտագործվում են հետևյալ իմաստով: Հիմնական միջոցներ՝ նյութական ակտիվներ են, որոնք առկա են ձեռնարկությունում, ընկերությունում, արտադրանքի արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման, ապրանքների իրացման, վարձակալության տալու կամ վարչական նպատակներով օգտագործելու ավելի քան մեկ տարի ժամկետով:

ՀՄ յուրահատկությունն այն է, որ դրանք արտադրության պրոցեսում օգտագործվում են բազմաթիվ անգամ և պահպանում են իրենց սկզբնական տեսքը, ձևը երկար ժամանակ:

Նորանկախ պետություններում, այդ թվում, Հայաստանի Հանրապետությունում, ՀՄ տնտեսական արդյունավետության գնահատումն և հաշվառումը տանելու համար օգտագործվում են նախկին հաշվապահական հաշվառումից ժառանգություն մնացած սկզբնական փաստաթղթերի տիպային ձևերը՝ ՀՄ ընդունման-հանձնման ակտերը, ներքին տեղափոխումների ապրանքագրքերը, վերանորոգման օբյեկտների ընդունման-հանձնման ակտերը, ՀՄ լուծարման ակտերը և ՀՄ հաշվառման գույքային քարտերը:

ՀՄ միավորի որպես ակտիվի ճանաչումը տեղի է ունենում ֆինանսական հաշվառման միջազգային և ազգային ստանդարտների սահմանած պահանջներին համապատասխան: ՀՄ միավորը որպես ակտիվ ճանաչելու առաջին

չափանիշին բավարարելը որոշելու համար կազմակերպությունը սկզբնական ճանաչման պահին ունեցած տվյալների հիման վրա պետք է որոշի ապագա տնտեսական օգուտների ստացման հավաստիության աստիճանը: Այս հավաստիացումը սովորաբար, առկա է լինում այն դեպքում, երբ ռիսկերի հատուցումները տրվել են ձեռնարկությանը, ընկերությանը: Մինչև դրա տեղի ունենալը ակտիվի ձեռք բերման գործարքը կարող է առանց նշանակալի տուգանքի չեղյալ համարվել և հետևաբար, ակտիվը չի ճանչվի:

Ֆինանսական հաշվառման միջազգային և ազգային «Հիմնական միջոցներ» ստանդարտները սահմանում են, որ ՀՄ միավորը, որը համապատասխանում է ակտիվի ճանաչման չափանիշներին պետք է չափվի իր սկզբնական արժեքով՝ ինքնարժեքով:

ՀՄ միավորի սկզբնական արժեքը ընդգրկում է նրա գնման գինը, ներկրման տուրքերը, հարկերը և պարտադիր այլ վճարումներ, որոնք համապատասխան մարմնի կողմից ենթակա չեն ձեռնարկությանը, ընկերությանը ետ վերադարձման և ակտիվը իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած ծախսում: Տրամադրված ցանկացած զեղչ և արտոնություն հանվում է գնման գնից:

Նորանկախ պետություններում, այդ թվում ՀՀ, ՀՄ սկզբնական արժեքի որոշման գործող կարգը և վերևում բերված հաշվապահական հաշվառման միջազգային և ազգային ստանդարտի պահանջները նույն այդ սկզբնական արժեքի որոշման խնդրում էապես իրարից չեն տարբերվում:

Շուկայական գների տատանումները, առանձին օբյեկտների ֆիզիկական վիճակի փոփոխությունները և այլ հանգամանքները պահանջում են փոխել՝ ավելացնել կամ պակասեցնել օբյեկտի սկզբնական արժեքը: ՀՄ օբյեկտի գնահատումը կամ վերագնահատումը ձևակերպվում է օբյեկտի գույքային քարտում կամ ՀՄ հաշվառման մատյանում:

Հիմնական միջոցների «ՀՄ» արտադրության պրոցեսում աստիճանաբար մաշվում են: Մաշվածքը արժեքային ցուցանիշ է, որը ցույց է տալիս ՀՄ օբյեկտի ֆինանսական որակի կամ տեխնիկա-տնտեսական հատկությունների կորուստ: Դրա համար ամեն մի ձեռնարկություն պետք է միջոցներ կուտակի վերջնականապես մաշված հիմնական միջոցների վերականգման համար:

Այսպիսի կուտակումը կատարվում է արտադրության ծախսերի մեջ՝ ներառելով հատկացումների գումարը, որը կոչվում է ամորտիզացիա: Ակտիվի մաշվածության գումարը իր ծառայության ընթացքում պարբերաբար բաշխելու համար կարող են կիրառվել մաշվածության հաշվարկման տարբեր մեթոդներ:

«Պաշարներ» ստանդարտի նպատակն է ձևավորել՝ ներկայացնել պաշարների հաշվառումը սկզբնական կատարված ծախսումների համակարգում:

Պաշարների հաշվառման հիմնական խնդիրը ակտիվ ճանաչվող ծախսումների որոշումն է, որը պետք է մնա այդպիսին մինչև դրանց իրացումից հասույթի ճանաչման պահը: Սույն ստանդարտը ներկայացնում է պաշարների ինքնարժեքի որոշման և դրա, հետագայում որպես ծախս, ճանաչման գործնական իրահանգ, ներառյալ դրա արժեքի պակասեցումը՝ դուրս գրումը, մինչև իրացման զուտ արժեքի մակարդակ՝ իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում, վաճառքի ձևավորվող գինն է, հանած համալրման և վաճառքի կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները:¹⁴

«Պաշարներ» ստանդարտը ներկայացնում է նաև արժեքի հաշվարկման բանաձևը, որը օգտագործվում է պաշարներին ծախսումներ՝ արժեք վերագրելու նպատակով:

Պաշարները ընդգրկում են՝

- նյութերը և օժանդակ միջոցները, որոնք պետք է օգտագործվեն արտադրության ընթացքում,
- ապրանքները՝ ներառյալ ձեռնարկությունների, ընկերությունների կողմից գնված և վերավաճառքի համար պահվող հողը և այլ ունեցվածքը,
- պատրաստի արտադրանքը,
- անավարտ արտադրությունը,
- արագաշարժ առարկաները:

¹⁴Խաչատրյան Հ.Ե., Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների կիրառման խորհրդատվություն, Երևան, 2012, էջ 4

Ծառայության ոլորտի կազմակերպություններում պաշարները ներառում են ծառայության ծախսումները:

Նյութերի և օժանդակ միջոցների հաշվառման կազմակերպման հիմնադիր սկզբունքներից մեկը հանդիսանում է դրանց դասակարգումը հերկյալ երկու հատկանիշներով՝ ըստ արտադրության գործընթացում դրանց ֆունկցիոնալ դերի և նշանակության՝ տնտեսագիտական դասակարգում և ըստ տեխնիկական հատկանիշների և ֆիզիկաքիմիական բաղադրության տեխնիկական դասակարգում:

Արտադրանքի պատրաստման և ծառայությունների մատուցման գործընթացում նյութերը և օժանդակ միջոցները ըստ ֆունկցիոնալ դերի և նշանակության խմբավորվում են՝ հումք և նյութեր, գնովի կիսաֆաբրիկատներ և համալրող կոնստրուկցիաներ, վառելիք, տարա և տարանյութեր, այլ նյութեր, շինանյութեր և այլ:

«Պաշարներ» ստանդարտի նպատակն է ձևավորել՝ ներկայացնել պաշարների հաշվառումը սկզբնական կատարված ծախսումների համակարգում:

Պաշարների հաշվառման հիմնական խնդիրը ակտիվ ճանաչվող ծախսումների որոշումն է, որը պետք է մնա այդպիսին մինչև դրանց իրացումից հասույթի ճանաչման պահը: Սույն ստանդարտը ներկայացնում է պաշարների ինքնարժեքի որոշման և դրա, հետագայում որպես ծախս, ճանաչման գործնական հրահանգ, ներառյալ դրա արժեքի պակասեցումը՝ դուրս գրումը, մինչև իրացման զուտ արժեքի մակարդակ՝ իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում, վաճառքի ձևավորվող գինն է, հանած համալրման և վաճառքի կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները:¹⁵

«Պաշարներ» ստանդարտը ներկայացնում է նաև արժեքի հաշվարկման բանաձևը, որը օգտագործվում է պաշարներին ծախսումներ՝ արժեք վերագրելու նպատակով:

Պաշարները ընդգրկում են՝

- նյութերը և օժանդակ միջոցները, որոնք պետք է օգտագործվեն արտադրության ընթացքում,
- ապրանքները՝ ներառյալ ձեռնարկությունների, ընկերությունների կողմից գնված և վերավաճառքի համար պահվող հողը և այլ ունեցվածքը,
- պատրաստի արտադրանքը,
- անավարտ արտադրությունը,
- արագաշարժ առարկաները:

Արտադրանքի պատրաստման և ծառայությունների մատուցման գործընթացում նյութերը և օժանդակ միջոցները ըստ ֆունկցիոնալ դերի և նշանակության խմբավորվում են՝ հումք և նյութեր, գնովի կիսաֆաբրիկատներ և համալրող կոնստրուկցիաներ, վառելիք, տարա և տարանյութեր, այլ նյութեր, շինանյութեր և այլ:

Շուկայական հարաբերությունների պայմաններում ձեռնարկությունը, ընկերությունը սկզբնական հաշվառման ձևը՝ մենորիալ-օրդերային, օրագիր-օրդերային, գլխավոր գիրք, հասարակ, ավտոմատացված, ընտրելիս պետք է ելնեն իրենց մշակած հաշվային քաղաքականության սկզբունքներից: Ձեռնարկության, ընկերության կողմից ընտրված հաշվառման տարբերակի հետ կապված՝ սինթետիկ հաշվառման ռեգիստրները ըստ ձևի կառուցվածքի և բովանդակության կտարբերվեն: Չնայած դրան, ընթացիկ ամսում մուտքագրված, ծախսված և իրացված նյութական արժեքների փաստացի ինքնարժեքի ձևավորման այդ ամբողջ տեղեկատվությունը արտացոլվում է գլխավոր գրքում:

Ֆինանսական հաշվառման միջազգային և ազգային «պաշարներ» ստանդարտը սահմանում է, որ պաշարների վերանշակման ծախսումները ներառում են արտադրանքի վերանշակման հետ ուղղակիորեն կապված ծախսումները, օրինակ՝ արտադրական անձնակազմի աշխատավարձը: Այն ընդգրկում է նաև պատրաստի

¹⁵Խաչատրյան Յ.Ե., Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների կիրառման խորհրդատվություն, Երևան, 2012, էջ 4

արտադրանքի վրա պարբերաբար բաշխվող հաստատուն և փոփոխուն արտադրական վերադիր ծախսումները, որոնք կատարվում են նյութերը պատրաստի արտադրանք դարձնելու ընթացքում:

Այնուհետև, հաշվապահական հաշվառման միջազգային և ազգային “պաշարներ” ստանդարտը առաջարկում է յուրաքանչյուր արտադրատեսակին վերագրվող վերամշակման ծախսերի որոշման եղանակ, երբ տեղի ունի մեկից ավելի արտադրատեսակների միաժամանակյա արտադրություն: Սա տեղի է ունենում օրինակ, երբ համատեղ արտադրվում է մի քանի արտադրանք, կամ արտադրվում է հիմնական և երկրորդական արտադրանք:

Ատենախոսության երրորդՅՅ Փոքր և միջին ձեռնարկությունների տնտեսական արդյունավետության բարձրացման ուղիները գլխում առանձնացված են արտասահմանյան փորձի կիրառման երկու ուղիներ՝ մեկը փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսական պաշարների աղբյուրների օգտագործումը և երկրորդը՝ մանր և խոշոր արտադրության սինթետի տնտեսական արդյունավետության բարձրացման փորձը: Ձեռնարկությունը իր գործունեությունը իրականացնելու համար կարող է գործի դնել ֆինանսական պաշարները, որոնք ստացվում են տարբեր աղբյուրներից և բաժանվում են արտաքին և ներքինի:

Ներքին աղբյուրներին բաժին է ընկնում փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման զգալի ծավալ: ԱՄՆ-ում չբաշխված շահույթը համարվում է շրջանառու կապիտալի և հիմնական ծախսերի ֆինանսավորման միջոց: Դրանով հանդերձ չբաշխված շահույթը որպես շրջանառու կապիտալի ֆինանսավորման աղբյուր առանձնակի կարևոր է իրենց չափերով մանր ձեռնարկությունների համար: Նրանց համար այդ ցուցանիշը կազմում է շուրջ 60%, իսկ կապիտալ ներդրումների ֆինանսավորման համար այն հաճախ օգտագործում են ավելի քան մեկ մլն դոլար ակտիվների հետ:¹⁶

Բազմաթիվ դրամական աղբյուրներից, որոնք հետաքրքրական են ֆինանսական շուկայում, կարելի է առանձնացնել երկու ֆինանսավորվող համագործեր - փոքր և միջին ձեռնարկություններ. ֆինանսավորում վարկավորվող միջոցներից և ֆինանսավորում բաժնետիրական կապիտալից: Այս աղբյուրների կիրառումը տարածված է փոքր և միջին ձեռնարկությունների մոտ և տարբեր երկրներում տարբեր է: Համաձայն Եվրոպական հետազոտական Կենտրոնի՝ ձեռնարկության կապիտալի կառուցվածքը մեծ մասամբ ազդում է առաջացած ֆինանսական համակարգի վրա, ինչպես նաև առանձին երկրների սովորույթները և մշակույթը, գործունեության չափերը և շահութաբերությունը:¹⁷

Ամբողջության մեջ ֆինանսավորման հաշվին կապիտալի մասնաբաժնի տրամադրումը զարգացած երկրներում ավելի քիչ է ընդունված փոքր և միջին ձեռնարկությունների մոտ: Եվրոպական Միությունում 2005թ. 9% և 6% փոքր ձեռնարկություններից օգտագործել են համապատասխանաբար մասնավոր ներդրողների միջոցները և հիմնադրամները իրենց սեփական կապիտալի ընդլայնման համար:¹⁸

Փոքր և միջին ձեռնարկությունների տեղը և դերը ազգային տնտեսության մեջ կլինի թերի, եթե չդիտարկենք նրանց փոխհարաբերությունների մասին հարցը խոշոր ձեռնարկությունների հետ: Իրենց ելայնմանը այդ փոխհարաբերությունները կարող են պայմանավորված լինել տարբեր տարիների առևտրային շահերից ելնելով: Փոխգործունեության նման ձևերը ստացել են բավականին լայն տարածում արդյունաբերական զարգացած երկրներում: Այսպես, ծախսերի մեկ քառորդը վերամշակվում է արդյունաբերության մեջ: ԱՄՆ-ում ֆրանձայզինգի համակարգում աշխատում են 80% ձեռնարկությունները մանրածախ առևտրի ոլորտում:¹⁹

¹⁶Scott J.A., Dunkelberg W.C., Dennis W.J., Jr. Credit, Banks, and Small Business – the New Century / J.A.Scott, W.C.Dunkelberg, - Washington D.C., January 2003. – P.20-22, www.nfib.com/pbjelect/3747922.htm

¹⁷The European Observatory for SME; Sixth Report/Report submitted to the Enterprise Directorate General of the Commission of the European Communities by KPMG Consulting. 2000, - P.155.

¹⁸SME Access to Finance / European Commission Flash Eurobarometer 174.-October 2005.-P.15.

¹⁹Взаимодействие малых предприятий с крупным производством на региональном уровне – М., 1998 www.nisse.ru

Հայաստանում իրականացվող բարեփոխումների բնագավառում առանցքային նշանակություն ունի փոքր և միջին ձեռնարկությունների ոլորտի զարգացմանն ուղղված հստակ պետական քաղաքականությունը: Փոքր բիզնեսի աշխուժացման պետական քաղաքականության առանցքային օղակը այդ ոլորտում հանդիսանում է հարկային համակարգի բարելավումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Փոքր և միջին բիզնեսը միանման հավասար կարևոր դեր է կատարում եվրոպական երկրների և Հյուսիսային Ամերիկայի երկրների տնտեսության մեջ, որի մասին են վկայում փոքր և միջին ձեռնարկությունների մեծ չափաբաժնի հիմնական տնտեսական ցուցանիշները: Դիտարկվող արդյունաբերական բարձր զարգացած երկրներում, ինչպես առանձին ընկերություններ, կառավարում են և ընդլայնում են իրենց գործունեությունը կամ դադարեցնում են իրենց գործունեությունը, փոքր և միջին ձեռնարկությունների հավաքական գործունեության հիմնական տնտեսական ցուցանիշները մնում են կայուն: Այսպիսով, իր ամբողջության մեջ, փոքր և միջին ձեռնարկությունների դերը տնտեսության բիզնեսի մեջ ժամանակի ընթացքում մնում է կարևոր և կայուն: Հայաստանը ետ է մնում բազմաթիվ զարգացած երկրներից իր հիմնական ցուցանիշներով, որը բնութագրում է փոքր և միջին բիզնեսի գործունեությունը: Հայաստանի տնտեսության մեջ փոքր բիզնեսի տվյալների դերն և տեղը բնութագրում է ոչ բավարար զարգացածության մեջ, որը մեծ մասամբ կանխում է բացասական գործունեությունը:
2. Փոքր ձեռնարկությունների համար որպես սկզբնաղբյուր գլխավոր դեր է կատարում Հայաստանի համար ձեռնարկությունների ներքին ռեսուրսները - դրանք են սեփական բիզնեսի միջոցները, չբաշխված շահույթը: Հիմնական ներքին աղբյուրները ձևավորվում են հայաստանյան և արտասահմանյան փոքր և միջին բիզնեսի ֆինանսական ռեսուրսները, որը համարվում է բանկային վարկը: Հետազոտությունների արդյունքում բացահայտվում են էական տարբերություններ հայաստանյան և արտասահմանյան վարկային գործունեության փորձի միջև փոքր և միջին բիզնեսի ձեռնարկությունների ռեսուրսների ձևավորման ժամանակ. Հայաստանում բանկային կապիտալը ընդամենը ձևականորեն համարվում է իր կարևորությամբ երկրորդ սկզբնաղբյուրը ֆինանսական աղբյուրների ձևավորման համար: Սեփական սահմանափակ միջոցները համարվում են ֆինանսավորման հիմնական աղբյուրներ փոքր և միջին ձեռնարկությունների համար ոչ զարգացած ետ մնացած աղբյուրների պատկերի մեջ, որը ամփոփում է ներդրումների գործընթացը բիզնեսի զարգացման մեջ: Այնուամենայնիվ, կարելի է եզրակացություն անել, որ ներքին սկզբնաղբյուրների գայթակղելու տեսանկյունից փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորումը Հայաստանում համապատասխանում է ֆինանսական համակարգի տեսակին, որը հիմնված է առևտրային բանկերի գործունեությանը, քանի որ այդպիսի տեսակը զրավում է փոքր ձեռնարկություններին դրամական միջոցների ներհոսք կատարելուն: Ինչպես կապիտալի մասնաբաժնի փոխադիջմանը՝ փոխարենը չստանալով զարգացում:
3. Այնպիսի գործոնները, ինչպես ձեռնարկությունների չափերը և նրանց գործունեության ժամկետները, ազդեցություն են ունենում փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման ձևերի վրա: Այդ ամենին համապատասխան հետազոտությունների մեջ ներկայացված է ձեռնարկությունների ֆինանսական ապահովման ձևերը և սահմանված են ձեռնարկությունների տեսակները, որոնք կիրառում են այդ ձևերը ավելի արդյունավետ: Միկրոձեռնարկությունները, հատկապես ձևավորման փուլում, ավելի հաճախ են հակված ֆինանսավորման վարկավորելու ձևերին, կամ էլ կիրառելու ոչ ձևական աղբյուրները: Նրանց համար ֆինանսավորման ձևերի ընտրությունը սահմանափակում է մտցում, երբ ավելի խոշոր

- ձեռնարկությունները ունենում են իրենց տրամադրության տակ մեծ միջոցներ, և նրանց հասանելի են բանկային վարկերը, առևտրային վարկերը, լիզինգային փոխառությունները, արժեթղթերի թողարկումը:
4. Չնայած նրան, որ վիճակագրական տվյալները խոսում են վարկավորման պետական հովանավորչության կիրառման մասին ոչ մեծ տոկոսադրույքներով, նմանօրինակ միջնորդությունը ունենում է բավականին մեծ նշանակություն: Այն երկրներում, որտեղ գոյություն ունի բիզնեսի վարկավորման հովանավորչության զարգացած համակարգ, ցածր է լինում սնանկացումը: Բացի այդ, ցուցանիշները կարող են լինել ավելի նվազ, այն դեպքում, երբ փոքր ձեռնարկությունները ուղղակիորեն դիմում են նրանց, և հավանաբար տեղեկատվություն չունեն նրանց օգնությունների մասին:
 5. Արտասահմանյան փորձը ապացուցում է, որ այն խնդիրները, որոնց առընչվում են առանձնացվածները, մեր հետազոտություններում ավելի կայուն են վարկային ռեսուրսների փնտրման ժամանակ: Հակառակ դեպքում, մասնակիորեն փոխհատուցվում է երաշխավորվող կազմակերպությունների գործունեությունը, որոնք օգնում են փոքր և միջին ձեռնարկություններին նվազեցնելու ռիսկի գործոնը: Տվյալ կազմակերպությունների գործունեությունը հանդիսանում է օրինակ հաջողությամբ հաղթահարելու այն դժվարությունները, որոնց հետ առընչվում են փոքր և միջին բիզնեսի ձեռնարկությունները Հայաստանում:
 6. Ի տարբերություն Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի երկրների, Հայաստանում փոքր ձեռնարկությունների ֆինանսավորման հիմնական աղբյուրը համդիսանում են սեփական միջոցները, իսկ ֆինանսական աջակցությունը վարկային-բանկային կազմակերպությունների կողմից և վարչական համակարգի կողմից աննշան դեր է կատարում: Չնայած դրական գնահատականներին փոքր ձեռնարկությունների դրությունը կարելի է գնահատել որպես կայուն, և ձեռնարկությունները զգում են պաշարների դեֆիցիտ զարգացման համար: Անհրաժեշտ է հենվել բացառապես սեփական ֆինանսական միջոցները սահմանափակելով բիզնեսի զարգացման համար:
 7. Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի երկրներում շուկան ամբողջությամբ իր խնդիրներով ապահովում է փոքր և միջին ձեռնարկությունների բիզնեսի վարկային ռեսուրսները և կարելի է առանձնացնել ընդամենը որոշակի շուկայական խնդիրներ, այդ դեպքում Հայաստանի խնդիրները հասանելի կլինեն որոշակի կատեգորիայի փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորման համար: Հնարավորությունը ստանալու վարկ մեզանում առանձնացված երեք տեսակի շուկաների համար գործնականում բացակայում է: Դետևաբար, տվյալ իրավիճակում խոսքը գնում է ոչ միայն շուկայի «եղ տեղերի» մասին, այլ նրան ապահովելու անհրաժեշտ դրամական միջոցներով: Փոքր բիզնեսում վարկավորման խթանման հիմնական միջոցներից մեկը Հայաստանում և արտերկրում մնում է տոկոսադրույքների մի մասի սուբսիդավորումը: Իսկ երաշխաբային սխեմաները հիմնվում են տարածաշրջանների մեծ մասի վրա: Այն սխեմաները, որոնք արդեն սկսել են իրացվել Հայաստանում, ունեն մի շարք թերություններ, որոնք կարող են հարցականի տակ դնել նրանց արդյունավետությունը: Կազմակերպությունների գործունեությունը, որը հիմնված է կոոպերացիայի սկզբունքի վրա, Հայաստանում զարգացած չէ, որը նախ և առաջ պայմանավորված է անհրաժեշտ օրենսդրական բազայի բացակայությամբ:
 8. Այն, որ ֆինանսական ռեսուրսների մուտքը Հայաստան կրում է պարբերական բնույթ, անհրաժեշտ է պետական ձևավորված հովանավորչական վարկային համակարգ փոքր և միջին ձեռնարկությունների մոտ, որոնք վարկավորման կարիք են զգում: Բացի իրենց հիմնական ֆունկցիաներից, նման օգնությունները նաև կնպաստեն ֆինանսական հոսքերին «ստվերից դուր գալուն»: Այդ ժամանակ ուշադրության արժանացնելով բացահայտված հետազոտությունների առանձին ձևերը, կարելի է գալ այն

եզրակացության, որ անհրաժեշտ է աջակցության դիֆերենցացված ձևերը գործի դնել: Արդյունավետ այլընտրանքի համար բանկային վարկավորումը նպատակահարմար է զարգացնել վարկային կոոպերատիվների համար: Ամբողջությամբ ընդլայնված է մուտքը դեպի փոքր և միջին ձեռնարկությունների վարկային ռեսուրսներ - երաշխիքային կազմակերպություններ:

9. Փոքր և միջին բիզնեսի ձեռնարկությունների ցուցանիշների ուսումնասիրության զարգացման համար նպատակահարմար են մասնագիտացված Յետազոտական ծրագրեր ուսումնասիրելը, փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման ծրագրերը, որոնք համախմբում են տեղեկատվական հոսքերը, որ գալիս են ՏՆտեսական զարգացման պետական կառույցներից:
10. Փոքր և միջին բիզնեսի աջակցության արդյունավետության գնահատման համար, որոնք իրականացնում են երաշխիքային և վարկային կոոպերատիվները, հետազոտությունները հիմնվում են ցուցանիշների համակարգի վրա, որոնք թույլ են տալիս բնութագրելու նրանց աշխատանքը ֆինանսական ցուցանիշների գործունեության հիմքի վրա, ինչպես նաև տնտեսության ազդեցության վրա, որը հանդես է գալիս հիմնական ցուցանիշները փոփոխված ձևով և բնութագրում է երկրում փոքր և միջին բիզնեսի զարգացման համակարգը: Նման մոտեցումը, որպես փոքր և միջին բիզնեսի ձեռնարկությունների գնահատման ձև, պայմանավորված է մի կողմից տվյալ կազմակերպությունների առանձնահատկություններով, որոնք հանդիսանում են ֆինանսական կազմակերպություններ և պատասխանատու են իրեց շահութաբերության համար, սակայն չեն կողմնորոշվում շահույթի ստացման հարցում, և մյուս կողմից նրանց կողմից իրականացվող կարևոր սոցիալական դերի հարցը աջակցելու փոքր և միջին բիզնեսին:
11. Բազմակողմանի գործունեությունը դաշնային, տարածքային և քաղաքային կազմակերպությունների իրշանությունների միջև, մասնավոր կապիտալը և փոքր ու միջին ձեռնարկությունները կարող են ստեղծել արդյունավետ կառույցներ աջակցելու փոքր և միջին բիզնեսի վարկավորմանը: Մասնավորապես երաշխիքային և կոոպերատիվների գործունեությունը: Այդպիսի կառույցների գործունեությունը օգտավետ կլինի երաշխիքային կազմակերպություններին, վարկային կոոպերատիվներին, բանկերին և փոքր ու միջին ձեռնարկություններին, երկրի տնտեսությանը և հասարակությանը ամբողջությամբ:

Ատենախոսության հիմնական արդյունքներն տպագրված են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում

1. Քոչարյան Ն.Ռ. Չեռնարկության գործունեության տեսակները և դրանց առանձնահատկությունները: //Սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները Գիտական հոդվածների ժողովածու, Երևան 2011թ. էջ 127-131
2. Քոչարյան Ն.Ռ. Հիմնական ֆոնդերի և պաշարների գնահատումը և հաշվառումը միջազգային ստանդարտների կիրառման պայմաններում <Մխիթար Գոշ> գիտամեթոդական հանդես, 1-3, Երևան 2012, էջ 152-155:
3. Քոչարյան Ն.Ռ. Փոքր և միջին ձեռնարկության արդյունավետությունը: Հայաստան Ֆինանսներ և էկոնոմիկա 5/143/ 2012թ. էջ 24-26:

Кочарян Норайр Рубенович

“Проблемы повышения эффективности экономической деятельности малых и средних предприятий”

Диссертация на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02.
“Экономика, управление хозяйством и его отраслями”.

Защита диссертации состоится на заседании специализированного совета по экономике 015
ВАК Республики Армения, действующего в Ереванском государственном университете 28-го июня 2013г., в 13:30,
по адресу: 0009, г. Ереван, ул. Абовяна 52.

Резюме

Диссертация посвящена изучению теоретических, методологических, законодательных, организационных и институциональных проблем повышения эффективности развития малого и среднего бизнеса в Р.А.

Основные результаты исследования заключаются в следующем:

- Малый и средний бизнес играют одинаково важную роль в экономике европейских стран и стран Северной Америки, чему свидетельствуют их высокие экономические показатели. В экономически развитых странах если некоторые компании расширяют или приостанавливают свою деятельность, то собирательные экономические показатели остаются стабильными. Армения отстает от большинства развитых стран своими основными показателями, которые характеризуются негативной деятельностью малого и среднего бизнеса.
- Для малых предприятий Армении основным финансовым первоисточником являются внутренние ресурсы - бизнес-активы, нераспределенная прибыль. Основным внутренним источником являются банковские кредиты. В ходе исследования выявлены значительные различия между армянской и иностранной кредитной деятельностью в процессе формирования ресурсов малого и среднего бизнеса. В Армении банковский капитал формально считается вторым источником финансовых ресурсов. Можно считать, что финансирование малых и средних предприятий в Армении соответствует той финансовой системе, которая опирается на банковскую деятельность.
- Такие факторы, как размер компании, сроки деятельности влияют на финансирование малых и средних предприятий. В соответствии с этим, в исследовании представлены виды финансовой поддержки и типы предприятий, которые используют эти методы более эффективно. Микропредприятия, особенно в процессе формирования, чаще всего используют формы кредитования или используют неофициальные источники финансирования. Их финансирование ограничено, так как крупные компании имеют больше ресурсов, и им доступны банковские кредиты, коммерческие кредиты, выпуски ценных бумаг.

- Государственная поддержка кредитования имеет большое значение. В тех странах, где развита система патронажа кредитования бизнеса, снижается уровень банкротства. Тем более, когда это касается малого бизнеса.
- В наших исследованиях, как показывает международный опыт, проблемы связаны с поиском более стабильных кредитных ресурсов. В противном случае, частично компенсируется деятельность гарантированных организаций, которые помогают малым и средним предприятиям в уменьшении факторов риска.
- В отличие от европейских и североамериканских стран, основным источником финансирования малых предприятий Армении являются собственные ресурсы, а финансовая поддержка кредитных и банковских учреждений и административной системы незначительна. Несмотря на положительные оценки, предприятия имеют ресурсный дефицит для развития. Необходимо полагаться исключительно на свои собственные финансовые ресурсы, ограничивая расширение бизнеса.
- В европейских и североамериканских странах рынок гарантирует кредитные ресурсы для малых и средних предприятий. В Армении же возможность получения кредита доступна некоторым категориям малых и средних предприятий. Одним из основных мер для содействия кредитования малого бизнеса в Армении является частичное субсидирование процентной ставки. Схемы, которые действуют в Армении, имеют недостатки и потому неэффективны. Деятельность предприятий, в основе которых лежат кооперативные принципы, в Армении не развиты, что связано с отсутствием необходимой законодательной базы.
- Так как вливания финансовых ресурсов в Армению является регулярным, необходима кредитная поддержка со стороны государства малым и средним предприятиям, которые нуждаются в кредитовании. Кроме того, такая помощь будет способствовать выводу финансовых потоков из тени. Необходимо развитие альтернативного кредитования для малых и средних предприятий, например создание гарантийных организаций.
- Для разработки показателей развития малых и средних предприятий целесообразно изучение специализированных научно-исследовательских программ, финансовых программ, которые объединяют информационные потоки, поступающие из государственных структур экономического развития.
- Исследования оценки эффективности содействия малому и среднему предпринимательству основаны на данных системы, которая позволяет характеризовать деятельность финансовых показателей на основе их работы, а также влияние на экономику, которая является основным показателем. и характеризует систему развития в стране малого и среднего бизнеса.
- Многосторонняя деятельность федеральных, региональных и муниципальных организаций, частный капитал, малый и средний бизнес, могут создавать эффективные структуры для поддержки кредитования малых и средних предприятий, в результате чего экономика страны будет развиваться.

Norayr Ruben Kocharyan

“The problem of increasing the efficiency of economic activity of small and medium enterprise”

Dissertation for the degree of candidate of economic sciences, specialty 08.00.02. "Economy, the management of economy and its branches."

The defense of the dissertation will take place on June 28, 2013 at 13:30, at the meeting of the Specialized Council 015 in Economics of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia acting at Yerevan State University, located at 52 Abovyan St., Yerevan 0009 Armenia

Summary

The present dissertation is devoted to the theoretical, methodological, legal, organizational and institutional problems of the efficiency of small and medium businesses in RA
The main findings are as follows:

- Small and medium enterprises play a significant role in the economy of European countries and North America, as evidenced by their strong economic performance. In economically developed countries, if some companies are expanding or suspend their activities, the collective economic indicators remain stable. Armenia stays behind most developed countries in its main indicators, which are characterized by negative activities of small and medium businesses.
- For small businesses in Armenia the primary sources of finance are internal resources - business assets, retained earnings. The main domestic sources are bank loans. The study revealed significant differences between Armenian and foreign credit activities in establishing resources of small and medium businesses. In Armenia, bank capital is formally considered a second source of financial resources. We can assume that financing of small and medium enterprises in Armenia corresponds to the financial system, which relies on banking.

- Such factors as the size of the company, the timing of activities also affect on the financing of small and medium-sized enterprises. Accordingly, the study presents types of financial support and the types of businesses that utilize these methods are more efficient. Micro-enterprises, especially in the process of formation, mostly use forms of credit or use informal sources of finance. Their funding is limited, as large companies have more resources available to them, and bank loans, commercial loans, securities issues.
- Government support in lending is very important. In countries where the system of patronage business lending is developed, the level of bankruptcy is reduced. Especially when it comes to small business.
- In our research, the international experience shows, that the problems is associated with the search for a more stable credit. Otherwise, partly offset by the activities of the guaranteed organizations that help small and medium enterprises to reduce risk factors
- In contrast to the European and North American countries, the main source of financing for small businesses in Armenia are own resources and financial support to credit and banking institutions and administrative system is negligible. Despite the positive assessment, companies have to develop a resource shortage. Must rely only on their own financial resources, which limits business expansion.
- In the European and North American countries the market guarantees loans to small and medium enterprises. In Armenia, access to credit is available to certain categories of small and medium-sized enterprises. One of the main measures to promote small business lending in Armenia is partially subsidizing the interest rate. Schemes that operate in Armenia, are flawed and therefore ineffective. The activities of the enterprises, which are based on co-operative principles in Armenia, are not developed due to the lack of necessary legislation.
- Since the infusion of financial resources in Armenia is regular, any credit support from the government to small and medium-sized businesses that need loans. In addition, such assistance will help to ease the financial flows from the shadows. We need to develop alternative lending to small and medium-sized enterprises, such as the creation of guarantee institutions.
- To develop indicators of the development of small and medium-sized enterprises appropriate to the study of specialized research programs, financial programs that integrate the flow of information coming from government agencies for economic development.
- Studies evaluating the effectiveness of assistance to small and medium-sized businesses are based on a system that allows us to characterize the activities of financial performance on the basis of their work, and the impact on the economy, which is the main mark. and characterizes the system of the country's small and medium-sized businesses.
- The multilateral activities of the federal, regional and municipal organizations, private capital, and small businesses can create effective structures to support lending to small and medium-sized enterprises, resulting in the country's economy will develop.

